նալ. ընդդէմ ապիրատութեան նորա զայս հնարք խորհեցաւ, և յուղարկեաց առ խոնտիքարն՝ որ զինքն հանէ ի պարոնութենէ, և զպարոնութիւնն տայ ի Բեթրան, զոր և արար այնպէս. և եկաւ նստաւ ի պարոնութիւնն, այս երրորդում անգամ։

1582–3. Հայոց թվ. ՌԼԱ. Մեծ և զարմանալի բան եղաւ ի մէջ Լաթինացոց ազգին. զի մեծ Պապն Հռոմայ փոփոխեց զիւրեանց բնական և առաքելադիր տօնն, զոր ունէին կարգեալ երիս սուրբ Ժողովոյն հայրապետաց. այսինքն է, Նիկիայի, Կոստանդնուպօլսի և Ցեփեսոսի Բ Ժողովոյն. քանզի օրէ յայնմանէ վարէին մինչեւ ցայժմ, և ոչ էին խոտորեալ ոչ ալ և ոչ յահեակ. զոր այժմ խոտորեցան առանց իւիք պատճառի (!)։ Ուր (որ) և հրամայեաց զամենայն տօնն զտէրունական և զմարտիրոսական և զամենայն Սրբոց՝ փոփոխել, և նորաձեւ կարգաւ վարել, որչափ կան Լաթինացոց ազգն. և է այսպէս խոտորումն նոցա. հրամայեաց զի զամենայն տօնսն տասն աւուրբ յառաջ տօնեսցեն, զոր յառաջագոյն ըստ հնոյն կարգի տօնէին. զոր և նոյն կերպիւ զոր վերագոյն գրեցաք՝ սկսան տօնել. զոր և բազումք յազգէ նոցա հիանալով զարմանային (վասն) նորաձեւ սահմանաց նոցա. բայց բազմաց հաճոյ չթուեցաւ այսպիսի խոտորումն իւրեանց ազգին։

1583. թվ. ՌԼԲ. Ոմն Մահար Եանչիկ անուն ժողովեց զխազախներն իբրեւ 5,000, և նոքօք գնաց և զթուրքի խոնտիքարին զքաղաք զՊենտէրն հրկիզ արար, և զբերդն աւերեց, և զմարդիքն որչափ գտաւ՝ զամէնն ի սուր քաշեց, և զամենայն ապրանքն թալանեց, զոչխար և զարջառ և զամենայն բարութիւն։ Եւ այս քաղաքացիքն որք մնացին ողջ՝ գնացին ի խոնտիքարն՝ լալով և կոծելով և մեծ ողբով, և պատմեցին նմա զիւրեանց վնասն. և խոնտիքարն հրաման արաւ զօրապետին իւրոյ, զի զօրօք իւրովք մտցէ ի այս թագաւորիս աշխարհ։ Եւ եկին անցին զՏունան, և անդ կացին մինչեւ ժողովեն զամենայն զօրս իւրեանց. բայց յետոյ քննութիւն արարին և ծանեան, եթէ թագաւորին գիտութեամբ ոչ էր այս բանս, այլ այն անիծած Մահրին բանիւ էր այս աւերումն և խառնակութիւնս. և յետ դարձան գնացին, վասն երդմանն և խաղաղութեան՝ զոր ունին իւրեանց մէջ երկու թագաւորքն։ Եւ այդ գոռոզ Եանչին հրկիզեալ սատակեցաւ։

1584. թվ. ՌԼԴ. Թագաւորն Ստեփանոս հրամայեց զի զխազախներին մաշեսցեն ի սուր սուսերի, վասն Պէնտէրին վնասուց համար, զոր գործեալ էին առանց հրամանաց թագաւորին. զոր պիտէր բազում խռովութիւն լինէր վասն նոցա պատճառի ի մէջ երկուց թագաւորաց, ըստ առաջասացելոյն։ Եւ թագաւորն հրամայեաց զի կալցեն զնոսա և պահեսցեն ի Կամինիցս, և ըստ հրամանի թագաւորին կալան 38 այր, և այլքն փախեան և թաքեան. և զորս կալան՝ փակեցին ի մէջ բերդին, մինչ որ թագաւորէն դառնայ չաւուշն. և երբ դարձաւ, և թագաւորն զիւր հաւատարիմն ուղարկեց ի հետ չաւուշին,